

25ին կը գրէ Անտոն Արքեպ.ին, եւ Մոհիլեւի կառավարութեան զեկուցում տուաւ, եւ Մոհիլեւի կառավարութիւնն ալ նոյն տարի Գեկտ. 15ին գրեց Անտոն Արքեպ.ին, որ ինքը խնդրէ Ս. Գահէն անուանման հաստատութիւնը:

Անտոն Արքեպ. կատարեց զայս 16 Յու-նուար 1821 նամակով, առ կարգինալ Գահերէց Ս. Ժողովոյ: Ասոր ինքնագիր օրինակը ղրկած է նաեւ Վիեննայի Մխիթարեանց Աբբա՛հայր Ա. Բարիկեան Արքեպ.ին 24 Ապր. 1821 նամակով, զոր կը հրատարակեմ ամբողջովին: Ասկէ քաղած եմ ես ալ իր կենսագրութիւնը:

Պայծառագոյն եւ վսեմագոյն իշխան գահերէց կարգի-նալ Ֆոնդանայ սրբազան ժողովոյն հռովմայ:

Յայտ առնեմ ծիրանափայլ բարձրուէ՛ ձերում, նախ մատուցանեմ ջերմեռանդ սրտիւ եւ արտասուալի աչք երկրպագուի՛ն տաճարին ձյ՛՛ անուամբ կառուցեալ գլխաւոր առաքելոց պետրոսի եւ պօղոսի, եւ ՚ի միջի եղել՝ սրբազան նշխարաց: Յետոյ ամենախոնորհուի՛ք նքլ գարշապարաց համբոյր մատուցանեմ երիցս երանեալ սրբազան փափին մերոյ ձոն Փիոսի փոխանորդին յնիքնի, եւ յաջորդին նքլ առաքելոյն Պետրոսի. Յետոյ պայծառագոյն կարդինալաց՝ Արքեպնց եւ եպնց յարգանօք համբոյր ձեռաց: Ոպ առաջի ձյ՛՛ նոյնպէս առաջի նքլ ժողովոյն յայտ առնեմ զձմ՝ որպիսուի՛ս: ՚ի 1817 դեկտ՝ 10. Nr. 326 հրամայել՝ էր գերապայծառ մտարապոլիտն մեր Ստանիսլաւուս սէսորէնչեվիչ թէ զձմ՝ որպիսուի՛ս յայտնեցից նմ՝ վնյ 8 օրջինալ վկայական գրեալք իմ, միջնորդուի՛ք մոյլովայ ատմինիստրաթոր Անտոն վարդերեսովիչ աթոռակալի յղեցի: Այսոքիկ են հարցմունքն եւ պատասխանիք: